Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվ

Ա4150570507

# Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 22 | Հունիս | 2018 թ. |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | |
| 5 | Հունիս | 2018 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Ա | 4150570507 |

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 5 Մայիս, 2018 թ. | 1108 |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

հաշիվ 1767

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 5 6 3 5 4 |
| [9] Անվանումը | «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 5 6 3 5 4 / 1 |
| [11] Բանկային տվյալները | <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ — N 163008140119 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Սարմենի 1 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | Փորձագետ՝ Լ.Հովհաննիսյան |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 3 3 3 3 4 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | ՀՀ ԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն — N 900011159044 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ Նալբանդյան 130 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ծառայության քանակը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Բեռնային գործ N12884417 ի անվտանգության փորձաքննություն | հատ | 1 | 81666.666 | | 81666.67 | 20 | 16333.33 | 98000 |
| **Ընդամենը** | | | | | | 81666.67 | X | 16333.33 | 98000 |

Դուրս գրող՝ NAHAPETYAN HAYK 3110840189
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

22/06/2018 10:58:59

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին

< 5 > դեկտեմբերի 2017թ.

ք. Երևան

ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ, ոստ. կ-ն Տ.Գաբրիելյանս, վերանայելով Անյա Վալոդի Եղիազարյանի մարմնական վնասվածք ստանալու վերաբերյալ նախապատրաստված նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017թ դեկտեմբերի 1-ին ժամը 10:55-ին Էրեբունու բ/կ-ից ոստիկանության Էրեբունու բաժին ահազանգ է ստացվել, որ <աջ կողերի կոտրվածք> ախտորոշմամբ հիվանդանոց է դիմել Անյա Եղիազարյանը /ծնվ. 06.01.1954թ./: Ըստ հիվանդի հայտարարության նույն օրը ժամը 09:00-ի սահմաններում Խորենացի փող. 30 հասցեի 1-ին հարկից ընկել է վերելակի հորը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում, պարզվել է, որ ս/թ դեկտեմբերի 1-ին ժամը 09:00-ի սահմաններում Անյա Եղիազարյանը Խորենացի փող. 30 հասցեի 1-ին մուտքի 1-ին հարկում, սեղմել է վերելակի կանչի կոճակը, որոշ ժամանակ անց վերելակի մուտքի դռները բացվել են, սակայն վերելակը իր համար նախատեսված տեղում չի եղել և Ա.Եղիազարյանը դա չնկատելով մտել է ներս և շուրջ 2 մ բարձրությունից ընկել է վերելակի հորանը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ նյութերով մի շարք էական նշանակություն ունեցող հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-246 հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն նյութերով նշանակել դատատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱ կենտրոնի փորձագետներին և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:
2. Փորձագետի լուծմանն առաջադրել ներքոհիշյալ հարցերը՝

ա/ Երևան քաղաքի Խորենացի փող. 30 շենքի 1–ին մուտքում գտնվող վերելակը գործարանային արտադրության է, թե ոչ, եթե այո ինչ ապրանքանիշի է, որ երկրի և տարեթվի արտադրության, որքան ժամանակ է տեղադրված եղել,

բ/ 2017թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ և զննության պահին պիտանի եղել է նպատակային շահագործման համար, թե ոչ, եթե ոչ ինչպիսի թերություններ է ունեցել, ինչի հետևանքով են դրանք առաջացել /գործարանային թերություններ են, տևական շահագործման հետևանքով առաջացած, կամ սխալ շահագործման հետևանքով առաջացած/

գ/ կան արդյոք վերելակի կառուցման կամ տեղադրման մեջ սխալներ, թերություններ, համապատասխանում է արդյոք այն տեղադրման ու շահագործման համար նախատեսված ստանդարտներին /պահանջներին/, թե ոչ, որոնք են շեղումները և ում կողմից են դրանք թույլ տրվել,

դ/ եթե կան թերացումներ /սխալներ/, ապա դրանք գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ տեղի ունեցած միջադեպի հետ, թե ոչ,

ե/ սույն դեպքով տեխնիկայի անվտանգության կանոնների խախտումներ թույլ տրվել են, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի և ում կողմից, տվյալ պահին ով է պարտավոր պահպանելու այդ կանոնները և ով է հանդիսացել պատասխանատու անձը,:

3. Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք կարևոր նշանակություն կունենան դեպքի իրական հանգամանքները և որպես մեղադրյալ ենթակա անձի արարքը որակելու համար և կմտնեն փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:
4. Փորձագետին տրամադրել սույն որոշման օրինակը:

Հետաքննիչ՝ [signature] Տ.Գաբրիելյան